

# Գավառի ավագ դպրոց

*Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման  
դասընթաց*

## **Հետազոտական աշխատանք**

Հետազոտող ուսուցիչ՝ Օլյա Ջժմաչյան

Ղեկավար՝ Ժենյա Միրիբյան

Թեմա՝ <<Միասնացած (Ինտեգրված) դասը կրտսեր դպրոցում>>

Գավառ 2022թ

## Բովանդակություն

1. Ներածություն.....	3
2. Միջառարկայական կապերի դերն ու նշանակությունը ուսումնական գործընթացում .....	4
3. Միջառարկայական կապերի իրականացումը ուսուցման գործընթացում.....	5
4. Ինտեգրված ուսումնական ծրագիր .....	8
5. Ինչպիսին է ինտեգրված ծրագրի կառուցվածքը.....	10
6. Միջառարկայական կապերը որպես սովորողների ուսուցումը և դաստիարակությունը խթանող միջոց. 11	
7. Ինտեգրված դասի արդյունավետությունը տարրական դպրոցում.....	12
8. Եզրակացություն.....	15
9. Գրականության ցանկ.....	16

## Ներածություն

Ներկայիս դպրոցում անհնար է դասապրոցեսը պատկերացնել և արդյունավետ կազմակերպել միայն ավանդական մեթոդներով: Ժամանակակից հայկական դպրոցը չլինելով մեկուսացված և առանձնացված միավոր իր ուսումնառության գործընթացը կազմակերպում է համաշխարհային դպրոցի փորձի ու նոր ձեռքբերումների հիման վրա: Այստեղ շատ մեծ դեր է խաղում ուսուցչի կրթված լինելը, բազմակողմանի զարգացած լինելը: Ուսուցիչը պետք է պատկերացում կազմի և գաղափար ունենա դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների մասին, որպեսզի կարողանա հմտորեն կազմակերպել և վարել միասնացած դասեր, այդ կերպ պայմաններ ստեղծելով դասավանդման ընթացքում աշակերտների կողմից բազմաբաղադրիչ գիտելիքների ձեռքբերման համար: Ավանդական ուսուցման առաջավոր մեթոդների, մեթոդական եղանակների ու հնարների կողքին գործածության ոլորտ են բերվում արդիականն ու ժամանակակիցը: Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Որպեսզի սովորելու գործընթացն առավել հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը: Դասի ժամանակ մի առարկան կապելով մյուս առարկաների հետ դասը ավելի հետաքրքիր, ինֆորմատիվ և արդյունավետ է դառնում: Դասի ժամանակ աշխույժ, բարձր տրամադրությունը առաջացնում է հոգեկան ուժերի վերելք, ձանձրույթն ու անտարբերությունը չեն ճնշում աշակերտին: Այս ձևով հնարավոր է դառնում միջառարկայական կապերի հաստատումը: Համաշխարհային մանկավարժական միտքը առաջադրում է ինտեգրված ուսուցումը, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը: Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն: Ինտեգրված դասերը ժամանակակից ուսուցման մեթոդների նորույթներից մեկն են: Այս տիպի դասերը կարելի է անցկացնել տարբեր առարկաներից: Ինտեգրված դասերը միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը:

## **Միջառարկայական կապերի դերն ու նշանակությունը ուսումնական գործընթացում**

Ուսուցման գործընթացում իրենցից առավել հետաքրքրություն են ներկայացնում միջառարկայական և ներառարկայական կապերը: Բնության երևույթները մի միասնական ամբողջություն են կազմում և դրանք հասկանալու համար էլ պետք է միասնական մոտեցում ցուցաբերել, այսինքն դրանք ուսումնասիրել այլ երևույթների հետ իրենց բազմակողմանի կապերի մեջ: Այսօր միջառարկայական կապերի խնդիրը արդիական է դարձել. հնարավորություն ենք ունենում հետաքրքիր ինտեգրված դասեր մշակել և իրականացնել: Տարրական դասարաններում դասավանդվող առարկաները առանց մեկը մյուսի անհնար է ճիշտ և լիարժեք դասավանդել: Մենք հստակ պատկերացնում ենք , որ օրինակ ես և շրջակա աշխարհը, երգ և երաժշտություն, կերպարվեստ առարկաները կապված են մայրենի լեզվի հետ, տեխնոլոգիան՝ մաթեմատիկայի հետ, քանի որ կատարվում են չափումներ, երկրաչափական պատկերների արտապատկերում և պատրաստում: Ցանկացած առարկայի դպրոցական դասընթացի ուսումնասիրության ժամանակ այլ ուսումնական առարկաների հետ միջառարկայական կապերը միշտ տեսադաշտում պիտի լինեն, որովհետև դրանց շնորհիվ ուսումնական նյութն ավելի խորն է ըմբռնվում, ընդլայնվում է սովորողների մտահորիզոնը: Իսկ բազմակողմանի զարգացած, մտածող անձնավորության ձևավորման համար շատ կարևոր նշանակություն ունեն տարբեր գիտությունների, երևույթների միջև եղած կապերի ճանաչումը:

Իսկապես, 21\_րդ դարի պահանջն է ունենալ բազմակողմանի զարգացած, լայն ճանաչողական մտահորիզոն ունեցող քաղաքացիներ, քանզի կադապարային մտածելակերպը տանում է լճացման, օրինակ՝ բնագիտական և հումանիտար առարկաների տեսական վերլուծություններին օգնում են կերպարվեստից ստացած գիտելիքները: Այլ կերպ՝ տարբեր առարկաներից ստացած գիտելիքները աշակերտներին հնարավորություն են տալիս ապահովվել բնագիտական մեկնաբանության և գեղագիտական դրսևորումների ներդաշնակություն:

## **Միջառարկայական կապերի իրականացումը ուսուցման գործընթացում**

Կրթական համակարգում շարունակաբար կատարվող բարեփոխումները պահանջում են նոր մեթոդոլոգիական մոտեցում կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների լուծման ժամանակ, որը կնպաստի կրթության որակի բարձրացմանը: Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ

ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ: Օրինակ՝ կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը: Սակայն ինտեգրված դասեր ուսուցիչներն այդքան էլ հաճախ չեն կիրառում: Դրանք հիմնականում կիրառվում են հետևյալ դեպքերում.

1. երբ հայտնաբերվում են միևնույն նյութի կրկնությունը տարբեր ուսումնական առարկաներում և դասագրքերում,
2. թեմայի ուսումնասիրության ժամանակի խնայողության դեպքում՝ ցանկանալով օգտվել մեկից ավելի առարկաների պատրաստի բովանդակությունից,
3. այնպիսի ընդհանրացված հասկացությունների (շարժում, ժամանակ, զարգացում, մեծություն և այլն), օրենքների, սկզբունքների ուսումնասիրության ժամանակ, որոնք ներառում են մարդկային կյանքի և գործունեության ամենատարբեր ասպեկտներ,
4. երբ ուսումնասիրվող նյութը դուրս է գալիս ուսուցանվող առարկայի ծրագրի շրջանակներից,
5. առարկայի դասավանդման ժամանակ պրոբլեմադիր և զարգացնող ուսուցում իրականացնելու ժամանակ: Իհարկե, կան նաև ինտեգրված դասերի կիրառման այլ դրդապատճառներ:

Մինչ ինտեգրված դաս անցկացնելը ուսուցիչը նախ դիմում է իր այն կոլեգային, ում դասավանդած առարկան պետք է ինտեգրվի իր առարկայի հետ: Երկու ուսուցիչներ պարզում և որոշում են իրենց առարկաների համատեղ հետաքրքրությունը: Ինտեգրված դասի արդյունավետ կազմակերպման համար կարևոր է երկու ուսուցիչների փոխգործունեության ճիշտ կազմակերպումը. նրանցից յուրաքանչյուրի գործողությունների հաջորդականության ու ընթացքի արդյունավետ ապահովումը: Ընդ որում՝ նրանց փոխհարաբերությունները կարող են տարբեր լինել. յուրաքանչյուրն ունի հավասար մասնակցության իրավունք կամ նրանցից մեկը հանդես է գալիս որպես առաջատար, իսկ մյուսը՝ խորհրդատու, կամ ամբողջ դասը կարող է վարել ուսուցիչներից մեկը, իսկ մյուսները պարզապես խաղան ակտիվ հյուրի դեր: Տարբեր է նաև ինտեգրված դասերի տևողությունը: Բայց առավելաբար օգտագործում են երկու կամ երեք դասաժամ՝ միավորված մեկ դասի մեջ: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Այսպիսի դասի կազմակերպմամբ կարելի է հաղթահարել խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, ընդլայնել ինֆորմացիան, փոփոխել ուսումնասիրության շրջանակները, խորացնել հասկացողությունը, հստակեցնել հասկացություններն ու օրենքները, ընդհանրացնել թեման, միավորել սովորողների փորձն ու դրա ըմբռնման տեսական մասը, համակարգել ուսումնասիրված նյութը: Դասի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց: Օրինակ՝ երբ վերցնում


են բովանդակությունը, ապա ինտեգրման համար առանձնանցվում է բովանդակության ցանկացած բաղադրիչ՝ հասկացություն, օրենք, սահմանում, փաստ և այլն: Կարելի է ինտեգրել նաև բովանդակային այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են մտավոր և գործնական կարողություններն ու հմտությունները: Տարբեր առարկաներից վերցրած այս բաղադրիչները, որոնք միավորվում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ, որի շուրջ հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը:

*Ինտեգրված դասի նախապատրաստական գործունեության ընթացքում ուսուցիչը որոշում է.*

1. ինտեգրված դասի անցկացման իր դրդապատճառներն ու նպատակը,
2. համակարգ ձևավորող բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը,
3. ինտեգրման ձևը,
4. միավորվող նյութերի միջև կապերի բնույթը,
5. նյութի հաջորդականության կառուցվածքը,
6. նյութի ներկայացման միջոցները,
7. դերերի բաշխումը ինտեգրվող առարկաների ուսուցիչների միջև,
8. տվյալ դասին սովորողների ուսուցման վերահսկման ձևերն ու տեսակները :

Պարզ և հստակ ձևակերպելով դասի նպատակը՝ ուսուցիչը հավաքում է մեկ դասում միավորվող ուսումնական նյութը, այսինքն՝ որոշում է ինտեգրման բաղադրիչները: Այս փուլում հավաքվում են միայն ուսումնական թեմաներն ու դրանց առանձին մասերը, որոնք պետք է կազմեն ինտեգրման բովանդակային հիմքը: Այստեղ դրսևորվում է նաև ինտեգրմանը մասնակցող ուսուցիչների փոխհամաձայնությունը: Ապա երկու ուսուցիչ սկսում են վերլուծել ընտրված նյութը և բաժանում են այն երկու մասի՝ հիմնական և օժանդակ: Հիմնական նյութը դառնում է դասի՝ համակարգ ձևավորող բաղադրիչը: Որպես համակարգ ձևավորող բաղադրիչ՝ կարող է հանդես գալ ինտեգրվող բովանդակության միայն այն հատվածը, որը որոշվում է առաջադրանքի նպատակով: Որպես այդպիսի բաղադրիչներ՝ կարող են լինել առանձին հասկացություններ, օրենքներ, մտքեր, ուսուցման մեթոդներ և միջոցներ: Համակարգ ձևավորող բաղադրիչի առանձնացումը կարևորվում է նրանով, որ հենց դրանով է որոշվում ինտեգրվող նյութը, որպեսզի այն մատուցվի ամբողջովին, որպեսզի պարզ բացատրվեն կամ պարզվեն դրա ի հայտ գալու պատճառները: Այսպիսով, ելնելով ինտեգրված դասի տեսակից և ինտեգրվող առարկաների դասերի տիպերից, ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները՝ զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ, շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից: Կախված նրանից, թե ինչ ձևով է տեղի ունենում ինտեգրումը : Պլանի մեջ հստակորեն ներկայացվում է քայլերի հաջորդականությունը, պարզորոշ ընդգծվում են առաջատար և օժանդակ

առարկաները: Ինտեգրված դասն արդյունավետ անցկացնելու նախապայմաններից ամենակարևորը դասի ճիշտ պլանավորումն է, որի մեջ, ըստ չափորոշի եռամսկարդակ պահանջների, պետք է ներառվի նաև գնահատման համակարգը: Ահա թե ինչու առարկայական ծրագրերը կազմելիս և նրանցում հանրակրթական ուսումնական հաստատությունների համապատասխան մասնագիտությունների ուսուցիչների կողմից կատարված փոփոխությունների ժամանակ հաշվի են առնվում տարբեր առարկաների ներքին ընդհանուր ու տրամաբանական կապերը: Այսպիսով, կրթական ծրագրերի բովանդակությունը կազմող տարբեր առարկաների իմաստն այն է, որ այդ բովանդակությունն արտացոլում է ամբողջական իրականությունն իր տարբեր կողմերով՝ փոխկապակցված ձևերով, իսկ միջառարկայական կապերը լայն հնարավորություն են ստեղծում ուսուցման նկատմամբ դրսևորելու համընդհանուր մոտեցում՝ սովորողների համար հիմք հանդիսանալով իրականության նկատմամբ միասնական հայացքների ձևավորմանը: Յան Ամոս Կոմենսկին դիդակտիկայի սկզբունքների



դասակարգման մեջ առանձնացնում էր համակարգվածության և հաջորդականության սկզբունքը, որի տակ հասկանում էր դպրոցական առարկաների միջև փոխադարձ կապերի ստեղծումը: Ընդ որում՝ այնպիսի կապերի, որոնց միջոցով այդ առարկաները նպաստեն մեկը մյուսի ըմբռնմանն ու յուրացմանը: Մեծ մանկավարժը նկատում է, որ ոչ ոքի հնարավոր չէ կրթություն տալ մի որևէ մասնակի գիտության միջոցով՝ անկախ մնացած գիտություններից: Դպրոցի տարրական դասարաններում միշտ էլ մեթոդական հիմնախնդիր է եղել միջառարկայական կապերի

կիրառումը: Այն շատ դեպքերում կրել է մեխանիկական բնույթ: Սակայն այլ են նորագույն մանկավարժական մոտեցումների ու ծրագրերի պահանջները: Տարրական դպրոցում ընթերցանության դասերի ընթացքում պահանջվում է նյութից բխող ինտեգրում նույն դասարաններում ուսումնասիրվող այլ առարկաների միջև՝ գրական ընթերցանություն-հայոց լեզու, գրական ընթերցանություն-երաժշտություն, նկարչություն, մայրենի լեզուաշխատանքի ուսուցում, մաթեմատիկա և այլն: Այս ծրագրի իրականացումը պահանջում է և՛ գիտելիքներ, և՛ տեղեկատվություն, և՛ ստեղծագործական միտք ու վարպետություն: Ինտեգրված դասը ժամանակակից մեթոդիկայի նորույթներից մեկն է: Ինտեգրված դասի միջոցով արտահայտվում են միջառարկայական կապերը: Այն կարելի է անցկացնել տարբեր առարկաներից: Ինտեգրված դասերը միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ դասերի օրինակներ: Ուշագրավ է ինտեգրումը ընթերցանության և քերականության միջև: Տարրական դասարանների մայրենիի դասագրքերը կազմված են հենց ինտեգրման սկզբունքով, որի պահանջն է՝ իրականացնել հայոց լեզվի գործնական ուսուցում ընթերցանության նյութերի միջոցով: Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ոչ թե

ինտեգրացում, այլ ուսումնական առարկաների միջառարկայական կապերի բովանդակային և տրամաբանական մոտեցում: Ժամանակակից մանկավարժագիտության մեջ ինտեգրումը սովորողի կողմից կոնկրետ որևէ երևույթի կամ բնագավառի ամբողջական ընկալման ձևավորումն է, որն իրականացվում է մասերը մի ամբողջի մեջ միավորելու և շրջապատի ու բնության երևույթների վերաբերյալ համապարփակ ու ամբողջական պատկերացում ձևավորելու ճանապարհով:

### **Ինտեգրված ուսումնական ծրագիր**

Ուսումնական ծրագրերը ինտեգրված են համարվում, երբ հանդես են գալիս միասնության մեջ, այսինքն՝ բոլոր առարկաները կամ գիտելիքի ոլորտները և ուսումնառության փորձը միասնական են: Ինտեգրված ուսումնական ծրագրերը հնարավորություն են տալիս գիտելիքների և հմտությունների վրա հիմնված կապեր ստեղծել ուսումնական առարկաների կամ գիտելիքի ոլորտների միջև և այդ գիտելիքները կապել կյանքի հետ: Ինտեգրված ուսուցման ծրագիրը ուսուցման մոտեցում է, որի ժամանակ կրթության բովանդակությունը չունի առարկայական սահմաններ: Առարկայական ծրագրերը կապակցված են՝ նպատակները, գործողությունները և գնահատումը համահունչ: Ուսումնական ծրագիրը կազմակերպվում է ընդհանուր թեմատիկաների շուրջ, առարկայական ուսուցումը ընդգրկում է միջառարկայական հմտությունները և հասկացությունները: Ստեղծվում են գիտելիքների և հմտությունների վրա հիմնված կապեր առարկաների և իրական կյանքի հետ: Չափորոշիչների վրա հիմնված ինտեգրման մոտեցումը միջառարկայական ուսումնական ծրագրում ապահովում է խորություն և միևնույն ժամանակ ճկունություն տարբեր համատեքստում: Ինտեգրված ուսումնական ծրագրերի առանձնահատկություններից է այն, որ թեմաները կարող են ընտրել սովորողները՝ ելնելով իրենց անձնական հետաքրքրություններից և սոցիալական մտահոգություններից, կարող են ուսումնասիրման համար նախատեսված ժամանակը կարգավորել իրենց կարիքներին համապատասխան, թեմաները կամ թեմատիկաները ուսումնասիրվում են՝ հիմնվելով սովորողների հարցերի վրա, երեխաները առարկաները կարող են սովորել իսկական հետաքննություն անցկացնելով, որի արդյունքում կձևավորվեն հմտություններ և կարողունակություններ, կընկալվեն տարբեր հայեցակարգեր, և, վերջապես, հնարավորություն են տալիս միմյանց կապակցել, ներառել փոխադարձ լրացնող ակադեմիական ոլորտներ: Ինտեգրված ուսումնական ծրագրերը նպատակ ունեն ուսումնառությունը դարձնել իմաստալից, սովորողների մոտ արժեքավոր հմտություններ զարգացնել, ձևավորել սովորողների բարոյական բնավորությունը, խթանել խորը ուսումնառությունը՝ կապելով այն իրական կյանքի հետ, խթանել իմաստալից ներգրավվածությունը ուսումնառության մեջ, աջակցել սովորողների ինքնաուղղորդվող գիտելիքների կառուցմանը, զարգացնել խնդիրներ լուծելու և ստեղծագործական գործունեությունը, խրախուսել արդյունավետ համագործակցությունը և հաղորդակցությունը: Ելնելով ինտեգրված



ուսումնական ծրագրերի առանձնահատկություններից և նպատակներից, հարկավոր է այնպես իրականացնել ինտեգրումը, որ սովորողները հաճույքով ներգրավվեն իմաստալից ու նպատակային ուսումնառության մեջ, կարողանան դրանք ծառայեցնել իրենց կարիքների ու հետաքրքրությունների բավարարմանը, սովորեն սովորել և մտածել, ինքնուրույն աշխատել, սովորածը կապել իրական կյանքի հետ՝ ժամանակի փոփոխություններին համահունչ փոփոխելով նաև մոտեցումները՝ կապված տեխնոլոգիաների զարգացման հետ: Այսպիսով, ինտեգրված ուսումնական ծրագրերը նպաստում են, որպեսզի 21-րդ դարի ուսումնական ծրագրերը ավելի իրատեսական լինեն, ծառայեն խելացի, մտածող, ստեղծարար, գործունյա քաղաքացիներ դաստիարակելու և արժանապատիվ հասարակություն ձևավորելու գործին: Այս ուսումնառությունն ունի մի շարք առավելություններ՝

- նպաստում է սովորողների խնդիրներ լուծելու և ստեղծագործական գործունեության զարգացմանը
- խրախուսում է արդյունավետ հաղորդակցվելն ու համագործակցելը
- ձևավորում է սովորողների բարոյական նկարագիրը
- նպաստում է սովորողների արժեքավոր հմտությունների զարգացմանը
- աջակցում է սովորողների ինքնաուղղորդվող գիտելիքների կառուցմանը
- սովորողները պասիվ սովորողից վերածվում են ակտիվ սովորողների
- թիմի անդամ են, որը պրոդուկտ է նախագծում, լուծում գտնում
- հետազոտում և տեխնոլոգիա են օգտագործում՝ արտեֆակտներ ստեղծելու համար
- հետամուտ են հարցերին, որոնք բխում են իրենց հետաքրքրություններից
- զարգացնում են բաց քննարկումներ անելու հմտություններ՝ պրոդուկտ ներկայացնելու համար:

Ուսուցիչները օգնում են մշակել հիմնախնդիրների վրա հիմնված սցենարներ, աջակցում և ուղղորդում են սովորողներին: Ինտեգրված ուսումնական ծրագրի առանձնահատկություններն են՝

- Սովորողների կողմից առաջադրվում են թեմաներ, որոնք բխում են իրենց անձնական հետաքրքրություններից և սոցիալական մտահոգություններից
- Թեմաների ուսումնասիրման համար տրվում է ժամանակ
- Թեմաների ուսումնասիրությունը հիմնված է սովորողների հարցերի վրա
- Առարկայի ուսուցումը ներառված է իսկական հետաքննության մեջ
- Հմտությունների և կոմպետենցիաների ձևավորումը, հայեցակարգերի ընկալումը հետաքննության համատեքստում է
- Ներառում է փոխադարձ լրացնող ակադեմիական ոլորտներ:

## **Ինչպիսին է ինտեգրված ծրագրի կառուցվածքը**

*Ինտեգրված ծրագիրը հիմնված է երեք մեծ գաղափարների վրա՝*

Իմանալ( ո՞րն է սովորողի համար ամենակարևոր գիտելիքը),

Անել( որո՞նք են սովորողի համար ամենակարևոր հմտությունները),

Լինել( ինչպիսի՞ անհատ ենք ուզում, որ սովորողները դառնան):

*Ինչպե՞ս է իրականացվում ինտեգրված ծրագիրը:*

Ինտեգրված ծրագիր իրականացնելու համար անհրաժեշտ է սովորողներին ներգրավել իմաստալից և նպատակային ուսումնառության մեջ, ապահովել գործողություններ, որոնք կապված են սովորողների կարիքների և հետաքրքրությունների հետ, համոզվել, որ սովորողները գիտեն ինչպես սովորել և ինչպես մտածել և ուսումը կապել իրական կյանքի հետ:

*Ինչպես են փոխվում ուսուցիչների և աշակերտների դերերը/պատասխանատվությունը:*

Ուսուցիչները սովորողների հետ համատեղ մշակում են հիմնախնդիրների վրա հիմնված սցենարներ, աջակցում են խորը մտածողությանը, գիտելիքերի կիրառմանը, ուղղորդում են առարկայական գիտելիքները 21-րդ դարի հմտություններ զարգացնելու համար:

Սովորողները ակտիվորեն ներգրավվում են իրենց գիտելիքների կառուցման գործում, թիմի անդամ են, որը պրոդուկտ է նախագծում, ներգրավված են նախագծերում, որոնք պայմանավորված են բաց հարցերով և որոնք բխում են իրենց հետաքրքրություններից, հետազոտում են տեխնոլոգիա, զարգացնում են հաղորդակցական և բանակցային հմտություններ: Չարգացնում են վերլուծական և տեղեկույթը մեկնաբանելու, բաց քննարկումներ անելու հմտություններ պրոդուկտը ներկայացնելու համար:

*Ինչպե՞ս է իրականացվում գնահատումը ինտեգրված ծրագրում:*

Ինտեգրված ծրագրի գնահատումը իրականացվում է ռուբրիկների (21-րդ դարի հմտությունների մտածողության գործընթացների համար), ստուգաթերթերի (չափանիշներ, ցանկալի արդյունքներ), ինքնագնահատման (բովանդակության նպատակների համար), թիմի անդամի գնահատման ( հաղորդագրության և համագործակցության նպատակների համար) միջոցով:

## **Միջառարկայական կապերը որպես սովորողների ուսուցումը և դաստիարակությունը**

### **խթանող միջոց**

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը: Դասի ժամանակ մի առարկան կապելով մյուս առարկաների հետ դասը ավելի հետաքրքիր, ինֆորմատիվ և արդյունավետ է դառնում: Մտածողության զարգացումը զգալիորեն խթանվում է. Երբ ուսուցումը կազմակերպվում է հուզական մթնոլորտում: Դասի ժամանակ աշխույժ, բարձր տրամադրությունը առաջացնում է հոգեկան ուժերի վերելք, ակտիվ ճանաչողական գործունեություն, ձանձրույթն ու անտարբերությունը չեն ճնշում աշակերտին: Գեղարվեստական զգացումները, օրգանապես ձուլվելով բնագիտական երևույթների գիտական մեկնաբանությունների հետ՝ աշակերտին մղում են գաղափարի լրիվ ըմբռնման: Չարմանքը, կասկածն ու հիացումները, բնության ուժերի ու օրինաչափությունների ընկալումը և դրանց բանաստեղծական, երաժշտական ու նկարչական անդրադարձները մի մեծ շղթա են կազմում: Այդ զգացումները պահպանվում են աշակերտների հիշողության մեջ ու հաջորդող դասերին վերապրելով, վերհիշելով ուժեղացնում են գիտական համոզմունքները: Այս ձևով հնարավոր է դառնում միջառարկայական կապերի հաստատումը ամենաանսպասելի դրսևորումներով. Տարբեր գուգորդումներով: Միջառարկայական կապերի ստեղծման նպատակներից մեկը դառնում է ձեռք բերած գիտելիքներն ու ընդհանրացումները սեփական գիտելիքների համակարգի մեջ ներառելը, հակադրելը, վերլուծելը և այլ տրամաբանական գործողություններ կատարելը: Որպեսզի աշակերտները ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն: Ընդ որում՝ դա պետք է արվի կանոնավոր և շարունակական ձևով: Այլ կերպ ասած՝ պետք է կարևորել ոչ միայն ուսումնական ծրագրի ընդգրկումը, այլև խորությունը: Դասավանդողը նկատելով աշակերտների դրսևորած ընդունակությունները պետք է ուղղորդի հասնելու լիարժեքության, ինքնադրսևորման և ինքնաբավարարման: Այս ձևով խթանելով մտածողության, երևակայության, հմտությունների ու կարողությունների զարգացմանը, կամքի ձևավորմանը: Դասը պետք է պլանավորել այնպես, որ տվյալ թեման ունենա դաստիարակչական, բարոյական, մարդասիրական, անհատի ձևավորման, բնության նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի, հայրենասիրության զգացումի, մասնագիտության գիտակցված ընտրության կողմնորոշում, շեշտը դնելով զգացումնալի դաստիարակության վրա:



### **Ինտեգրված դասի արդյունավետությունը տարրական դպրոցում**

Տարրական դպրոցում լեզվական քերականական գիտելիքների ուսուցումն իրականացվում է գործնական եղանակով: Գիտական սահմանումներ տրվում են այն չափով, որքանով գործնական վարժությունների հիման վրա աշակերտները հասնում են ընդհանրացումների ու եզրակացությունների: Ուսուցիչն օգնում է նրանց՝ եզրույթների ճանաչման և խոսքի մեջ դրանց կիրառման օրինաչափությունների գործում: Լեզվի գործնական ուսուցումը կատարվում է ընթերցանության համար նախատեսված՝ բարբառայնությունից զուրկ, գրական բարձր հայերենով բնագրերի հենքով, որոնք իրենց մեջ պարունակում են անհրաժեշտ քերականական նյութի օրինակներ: Ուսուցիչը չպետք է անտեսի այն հանգամանքը, որ մեր օրերում աշակերտ-գեղարվեստական գիրք կապի խզման (կամ նվազագույնի հասնելու) ցավալի երևույթի պատճառով զգալի անջրպետ է գոյացել գրական և խոսակցական լեզվի միջև: Աշակերտները չեն տիրապետում քերականորեն ճիշտ խոսք կառուցելու պահանջներին: Նրանց խոսքի մեջ իշխող է դարձել ժարգոնային, բարբառային, օտարաբան բառերի օգտագործումը: Այս առումով էլ, սկսած տարրական դասարաններից, իրականացվում է լեզվի գործնական ուսուցումը: Լեզվական տարբեր իրողությունների ուսումնասիրման նյութ է ծառայում գրական բնագիրը: Դրա մեջ դրսևորվում և փոխադարձ կապերի մեջ երևում են լեզվական տարրերն ու մակարդակները, քերականական առանձնահատկություններն ու օրինաչափությունները: Այսինքն՝ կազմակերպվում է ինտեգրված ուսուցում, որի ընթացքում միջառարկայական կապերի հանգույցում հանդես են գալիս միմյանց հետ սերտորեն կապակցված երկու առարկաներ՝ հայոց լեզու և գրական ընթերցանություն: Նկատելի է, որ գործող դասագրքերում երբեմն քերականական նյութը հրամցվում է ոչ տեղին, այսինքն՝ ընթերցանության համար նախատեսված այնպիսի բնագրի կողքին, որի մեջ չկան համապատասխան օրինակներ: Ուսուցիչն այս դեպքում պետք է ճկուն կերպով մայրենի լեզվի գործնական ուսուցում իրականացնի այն նյութերի հենքով, որոնցում դրա

պայմանները կան: Ենթադրենք ուսուցիչը ցանկանում է բացատրել կոչականը, օրինակ՝ որևէ պատմվածք ուսումնասիրելիս ուսուցիչը հարցաշար կարելի է կազմել հետևյալ բովանդակությամբ.

1. Ովքե՞ր են հանդես գալիս այս պատմվածքում:

2. Ինչպե՞ս է կառուցված պատմվածքը: (Պատասխանն ընտրվում է տրված տարբերակներից). ա/ պատմողական ձևով, բ/ գրույցի, երկխոսության ձևով, գ/ նկարագրության ձևով: Օրինակ, եթե ընտրվում է բ/ տարբերակը, դրա շուրջ համառոտ ընթացիկ գրույց է կազմակերպվում՝ «Ինչ է նշանակում գրույց, երկխոսություն» թեմայով: Աշակերտները հանգում են այն եզրակացության, որ գրույցը երկու և ավելի մարդկանց միջև տեղի ունեցող խոսակցություն է: Այդ ընթացքում նրանք միմյանց դիմում են՝ անունը , կոչումը կամ հարգալից որևէ դիմելաձև /ծերուկ, երիտասարդ, տիկին և այլն/ նշելով: Դա հարգալից վերաբերմունքի դրսևորում է: Մեկի հետ խոսելիս պետք է նրան դիմել, կոչել անունով կամ քաղաքավարական որևէ այլ դիմելաձևով: Անվանել և կոչել հոմանիշային բառերից էլ կոչական բառն է ծագել /կոչ+ական/: Այնուհետև ուսուցչի կողմնորոշմամբ՝ աշակերտները ճանաչում են կոչական հասկացությունը: Գիտելիքներն ամրապնդելու նպատակով ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին՝ գտնել կոչականի գործածության այլ դեպքեր: Հաջորդ առաջադրանքի բովանդակությունը տարբերվում է նախորդներից. կարդալ այն երկխոսությունները, որոնց մեջ բացակայում է կոչականը, և ինքնուրույն ավելացնել համապատասխան կոչական բառը ( աշխատանքային այս ձևը կազմակերպվում է գույգերով): Առաջադրանք 3. Չույգեր կազմեք, հորինեք 1-2 նախադասությունից կազմված գրույց: Դիմեք միմյանց՝ գործածելով կոչականներ: Երբ աշակերտները հմտանում են կոչականի կիրառության մեջ, ուսուցիչն անցնում է աշխատանքի հաջորդ փուլին՝ կոչականի կետադրությանը: Աշակերտները նկատում են, որ տրված բառի վերջին վանկի ու ձայնավորի վրա դրված է շեշտ, և եզրակացնում են. կոչականի վրա դրվում է շեշտ: Ուսուցիչն աշակերտների ուշադրությունը բևեռում է բառակապակցությունների վրա: Կազմակերպվում է խմբային աշխատանք՝ հետևյալ հարցադրումներով.

ա/ Այդ կապակցություններում ո՞ր բառերն են կոչականները:

բ/ Եթե կոչականն իր վրա շեշտ է ընդունում, ինչո՞ւ շեշտված չեն կոչականները:

գ/ Ո՞ր բառերն են շեշտված, և ի՞նչ կապ ունեն դրանք կոչականների հետ: Տրվում է չորս բույս ժամանակ: Պատասխանների արդյունքում վերջնական ձևակերպում է ստանում հետևյալ միտքը. «Եթե կոչականն ունի լրացում, ապա շեշտը դրվում է այդ լրացման վրա»: Հաջորդ ժամերի ընթացքում ամրապնդվում են գիտելիքները, և աշակերտները ձեռք են բերում նոր տեղեկություններ.

ա/ Կոչականը հիմնականում գործածվում է երկխոսությունների դեպքում կամ ուրիշի ուղղակի խոսքի մեջ:

բ/ Կոչականը կարող է դրվել խոսքի սկզբում:

Կրկնողական վարժությունների միջոցով ձեռք բերված տեղեկությունները վերածվում են հմտությունների, և ուսուցիչն արդեն հանձնարարում է նոր աշխատանք՝ գրել կապակցված տեքստ կոչականների գործածությամբ: Կարելի է տալ առաջին երկու նախադասությունը՝ պահանջելով շարունակել, կամ վերջին նախադասությունները՝ պահանջելով գրել սկիզբը: Աշխատանքային այս ձևով հստակ ընդգծվում է մանկավարժական այն ռազմավարությունը, ըստ որի՝ գիտելիքներից բացի սովորողի մեջ անհրաժեշտ է զարգացնել դրանք կիրառելու իրական կարողություններ ու հմտություններ, ընդգրկել նրան ճանաչողական գործունեության մեջ և ուղղորդել նրա ներքին ուժերն ու հնարավորությունները: Ինտեգրված դասի ընթացքում աշակերտների որոնողական և համագործակցային աշխատանքային ձևերն ավելի ակտիվ բնույթ են կրում: Ինտեգրված առարկաների և դրանց փաստացի նյութի շուրջ կատարվող աշխատանքները բխում են բնագրի բովանդակությունից, թեմայից, լեզվից: Հասկանալի է, որ տարրական դասարանների աշակերտները լիովին ի վիճակի չեն լինի գտնելու հարցաշարերում առաջադրված բոլոր հարցերի պատասխանները: Այս դեպքում համագործակցված աշխատանքը կրելու է աշակերտ ծնող, աշակերտ տեղեկատվական, գիրք, աշակերտ ուսուցիչ, աշակերտ աշակերտ զույգերով կամ խմբային կիրառության ձևը: Միջառարկայական կապերի ինտեգրումը մայրենի լեզվի ուսուցչին հնարավորություն է ընձեռում լրացնել աշակերտների գիտելիքների պակասը՝ պատմությունից, հայրենի բնությունից, երաժշտությունից ու նկարչությունից: Ուսուցման այս ռազմավարությունը նպաստում է աշակերտների բազմաբնույթ մտածողության զարգացմանը: Նրանց առջև լայն հնարավորություն է ստեղծվում առարկաների միջև առկա կապերի ցուցադրմամբ հաղորդակցվել գիտության ու կյանքի տարբեր բնագավառների զանազան երևույթներին, պատճառահետևանքային կապերին և օրինակափոխություններին: Այդ ճանապարհով նրանք աստիճանաբար վարժվում են ինքնուրույն աշխատանքի, որը կարևոր ուղենիշ է դառնալու՝ նրանց հետագա ամբողջ կյանքի ընթացքում շարունակական կրթության խոչընդոտները հաղթահարելու, ինքնուրույն ուսուցման, կատարելագործման ու բազմակողմանի զարգացման առումով: Քիչ չէ այն ուսուցիչների թիվը, ովքեր գերադասում են աշխատել միայն ավանդական մեթոդներով: Նրանք դժվարությամբ են ընդունում բարեփոխումներով պայմանավորված նորը: Ոչ ոք չի կարող հերքել, որ մեծ են մեր ուսուցչապետերը՝ Մ. Մաշտոցից մինչև Իս. Աբովյան, Ղ. Աղայան, Լ. Շանթ, Մանդինյան, Հ. Օշական, Ա. Տեր Գրիգորյան և ուրիշներ, և նրանց ավանդած մեթոդները, հիրավի, ընդունելի են: Սակայն այդքան հզոր թիկունք ունենալը չի նշանակում առաջ չնայել: Դարձյալ վկայակոչենք Պ. Սևակին. «Ժամանակն է, որ մենք հասկանանք և մեկընդմիջտ հիշենք, որ Թումանյանն ու Իսահակյանը մեր թիկունքն են, մեր մեջքը, մեր հետևապահ զորագունդը»:

## Եզրակացություն

Այսպիսով, մենք եկանք այն եզրակացության, որ ինտեգրացված դասերը հզոր խթան են հանդիսանում սովորողի հոգեկան գործունեության մեջ: Սովորողները սկսում են վերլուծել, համեմատել, որոնել երկու օբյեկտների ու երևույթների միջև կապը: Այն հոգնածությունը, ձանձրույթը, որը սովորողների մոտ նկատվում է միանման դասից, վերանում է, այս դեպքում դասը առաջացնում է հետաքրքրություն և աշխուժություն: Ինտեգրված դասերը հաճախ ուղեկցվում են բացահայտումներով ու հայտնագործություններով, առաջ է գալիս ստեղծականությունը, հետազոտական նաև նախագծային աշխատանքը: Բացի վերը նշվածից, այս տեսակ դասերը ստեղծագործ ուսուցչին հնարավորություն են տալիս հասնել նոր մակարդակի, բացահայտել իր համար ստեղծականություններ, մտնել նոր փուլ, իսկ սովորողին՝ զարգացնել ստեղծագործական մտածողությունը, ինքնակրթվելու հնարավորություն ստեղծել: Ընդ որում, ուսումնական նյութերը պետք է լինեն մատչելի, ոչ ծանրաբեռնված, դասարանում ուսումնական գործընթացը պետք է համապատասխանի սահմանային ծավալին: Սովորողը պետք է ստանա այնքան ստեղծականություն, որ չխնձվի նյութերում: Ինտեգրված ուսուցմամբ դասապրոցեսի իրականացումը բնութագրվում է մի շարք օրինաչափություններով, որոնցից մասնավորապես առանձնացնենք հետևյալները՝

- դասապրոցեսի ընթացքը ըստ մանկավարժի հեղինակային մտածողությամբ իրականացված սցենարի,
- դասապրոցեսի բոլոր փուլերի և բաղադրիչների տրամաբանական կապվածությունը և նրա ծավալումը առանցքային թեմայի շուրջ,
- դասի համար ընտրված դիդակտիկ նյութի շղթայում դասագրքային և լրացուցիչ գրականության հասկացությունների ու գաղափարների համադրումը,
- դասապրոցեսի անցկացումը ինչպես մեկ, այնպես էլ ավելի ուսուցիչների մասնակցությամբ, որոնք կարող են հանդես գալ որպես խորհրդատու մանկավարժներ:

Արդյունավետ դասերը նաև լեզվական կողմնորոշում են, որոնք սովորաբար ունեն համեմատական բնույթ, օրինակ, որոշակի առումով, հայերենի քերականություն և անգլերեն լեզու: Միջնակարգ կրթության ժամանակակից կողմնորոշումը սերտորեն կապված է համակարգչային և ժամանակից տեխնոլոգիաներին: Այնպես որ, դասերը, միանշանակ, ինտեգրված են համակարգչային գիտությանը, որով ամրապնդում են նոր գիտելիքները անհատական համակարգչային ուսուցման համար: Ժամանակակից սովորողները մեծ հաճույքով են աշխատում համակարգչով, որն էլ դասը դարձնում է ավելի հետաքրքրաշարժ:

Կրթությունը պետք է՝ պատրաստի լայն մտահորիզոնով քաղաքացու, որն օժտված լինի յուրացված գիտելիքները համակարգելու և ըստ անհրաժեշտության դրանք կիրառելու կարողությամբ, միաժամանակ չվախենալ դժվարություններից և պատրաստ լինի ստացած գիտելիքները օգտագործել ծառայած խոչընդոտները հաղթահարելու նպատակով: Այդ գործընթացը պետք է սկսել կրթության առաջին

աստիճանից՝ տարրական դասարաններից, որը սովորողին հնարավորություն կընձեռի պահպանել երևույթների ամբողջականությունը, բազմաշերտությունը, համակարգվածությունն, ու զգայականությունը: Ուստի հենց տարրական դպրոցում երեխան պիտի ունենա համակարգված և ամբողջական ընկալման բնության և նրա երևույթների վերաբերյալ: Հետևաբար անհրաժեշտ է, որ նա առարկան և երևույթները քննի տարբեր կողմերից՝ զգայական, գեղարվեստական, գիտական և այլն: Այս ճանապարհին ընտրելու դեպքում սովորողն զբաղվում է ստեղծագործական աշխատանքով: Աշակերտը սովորում է համակարգել ստացած տեղեկատվությունը, որն էլ անհրաժեշտ է հետագայում ավելի բարձր կարգի մտածողության անցնելու համար, զարգանում է նրա մտահորիզոնը, դրսևորվում է սեր և հետաքրքրություն դեպի դասը և ուսուցումը:

### **Քրականության ցանկ**

1. [1.armeco.am/publ/2-1-0-71](http://armeco.am/publ/2-1-0-71)
2. [lib.armedu.am](http://lib.armedu.am)
3. Մկրտչյան Փայանե «Տարրական միջին դպրոց անցման դժվարություններն ու մտահոգությունները»
4. Краевский В. В. Основы педагогики, Учеб. Пособие для студ. Высш. Пед. Учб. Заведений.-2-е изд., испр.-М.: Изд. «Академия» 2005 г. 256 ст.
5. Кумарин В. Педагогика природосообразности и реформа школы, М.: Изд. «Народное образование», 2004 г. 624 ст.
6. Марфенин Н. Н. Чему и как учить для устойчивого развития?



Հավելված 1.

Օրվա դասի պլան

Ուսուցիչ՝ Օլյա Ջժմաչյան

Առարկա՝ մայրենի, ես և շրջակա աշխարհը	Տևող՝ 45ր.	Ամսաթիվ՝	Կիսամյակ՝ 1-ին	Դասարան՝ 3-րդ
Աշակերտ. թիվը՝ 33	Աղջիկ՝ 17      Տղա՝ 16			
Թեմա՝	Երկնքի բոլոր աստղերը ճանաչում էին նրան: Երկիր մոլորակը: Երկնքում մի ավազահատիկ:			
Օգտագործվող նյութեր՝	Պաստառներ, նկարներ, գլոբուս, սահիկաշար կամ տեսանյութ			
Դասի նպատակը՝	<p>Աշակերտները՝</p> <ul style="list-style-type: none"> <li>.կկարողանան հասկանալով ընթերցել բնագիրը,</li> <li>.կկազմեն դատողական բնույթի խոսք՝ տրամաբանորեն համադրելով կարդացածի տվյալները,</li> <li>.կկարողանան ստեղծագործաբար պատասխանել բնագրի հարցերին,</li> <li>.կընդլայնեն ճանաչողական մտահորիզոնը և կհարստացնեն բառապաշարը,</li> <li>.կլրացնեն խաչբառը՝ խորացնելով հոմանիշ, հականիշ, բարդ բառերի բառակապակցությունների ընդհանուր և կոնկրետ իմաստ արտահայտող բառերի մասին ունեցած գիտելիքները:</li> </ul> <p>Աշակերտները՝</p> <ul style="list-style-type: none"> <li>. նախնական գիտելիքներ կստանան գալակտիկայի, արեգակնային համակարգի, երկնային մարմինների մասին:</li> <li>. Կիմանան տիեզերական մարմինների տեսակները և բնութագրիչները:</li> <li>. Կկարողանան դիտարկել և նկարագրել բնության մեջ կատարվող պարբերական փոփոխությունները(գիշեր-ցերեկ):</li> <li>.Կստանան ճանաչողական գիտելիքներ:</li> </ul>			

Վերջնարդյունքները	<p>Աշակերտները կկարողանան՝</p> <ul style="list-style-type: none"> <li>.հասկանալով ընթերցել բնագիրը,</li> <li>.կազմել դատողական բնույթի խոսք և տրամաբանորեն համադրել կարդացածի հետ,</li> <li>.ստեղծագործաբար պատասխանել բնագրի հարցերին,</li> <li>.ընդլայնել ճանաչողական մտահորիզոնը և հարստացնել բառապաշարը,</li> <li>.լրացնել խաչբառը, դասակարգել հոմանիշ, հականիշ, բարդ բառերի, բառակապակցությունների, ընդհանուր և կոնկրետ իմաստ արտահայտող բառերը:</li> <li>.արժևորել բնության պահպանության և մաքրության անհրաժեշտությունը՝ որպես հրատապ և կարևոր խնդիր:</li> <li>.հիմնավորել, որ բնական հարստությունը անսպառ չէ:</li> </ul>
Դասի տիպը	Միասնացած (Բնտեգրված) դաս
Մեթոդներ	Հարցադրումներ, երեք բանալի և մեկ կողպեք, խմբային:

### Դասի ընթացքը

Գործողություններ/ (Ժամ/տևողություն)	Աշակերտներ	Ուսուցիչ
Կազմակերպչական մաս՝ 5 րոպե	Պատրաստվում են դասին	<p>.հանախումների հաշվառում</p> <p>.տնային աշխատանքի ստուգում</p>

<p>Խթանման փուլ՝ 5 րոպե</p>	<p>Պատասխանում են ուսուցչի հարցերին, բացում են դասագրքերը և կարդում են փոքրիկի հղումը</p> <p>կկռահեն փոքրիկ աղջկա հարցի պատասխանը:</p>	<p>Ուսուցիչը տալիս է կենտրոնացնող հարցեր, որոնց պատասխանները թաքնված են նոր նյութի մեջ</p> <p>Հիմա ուշադիր լսեք մի փոքրիկ հեքիաթ՝ կորած աստղերի և լուսնի մասին: Կար-չկար մի փոքրիկ աղջիկ կար: Նա քնելուց առաջ սիրում էր նայել աստղազարդ երկնքին և գրուցել աստղերի ու լուսնի հետ: Աղջկան դուր էր գալիս աստղերի չարանճի փայլը, նրանց գույնգույն շողիկներն ու պայծառ ժպիտները:</p> <p>Նա գրուցում էր աստղերի հետ, բարի գիշեր մաղթում իր փայլուն ընկերներին և գնում քնելու: Մակայն առավոտյան շատ էր վշտանում, երբ իր երկնային ընկերներին այլևս չէր գտնում երկնքում: Ոչ ոք նրա հարցին չէր պատասխանում՝ թե ուր էին ջրանում իր գողտրիկ ընկերները... Իսկ ըստ ձեզ...</p>
<p>Իմաստի ընկալում- բովանդակային մաս՝ 15 րոպե</p>	<p>տեքստի յուրաքանչյուր հատված ընթերցելուց հետո խմբերը դադար են առնում և միմյանց հարցեր տալիս:</p>	<p>Տեքստը ուսուցիչը բաժանում է հատվածների, դասարանը բաժանում է համագործակցային խմբերի, ուսուցիչը աշակերտներին կուղղի մի քանի դիպուկ և ուղղորդող հարցեր</p> <p>Օրինակ՝ Ի՞նչ է տիեզերքը:</p> <p>Տիեզերքը ողջ աշխարհն է և նրանից դուրս գտնվող ամեն ինչ: Տիեզերքը բոլոր աստղերն են ու մոլորակները, երկրագունդը, նրա բուսականությունը, կենդանական աշխարհը: Ես, դու, մի խոսքով՝ ամեն ինչ:</p> <p>ԳԱԼԱԿՏԻԿԱ- Աստղերի և մոլորակների հսկայական խմբերը գալակտիկաներ են: Տիեզերքում կան միլիարդավոր գալակտիկաներ, որոնցից մեկում ապրում ենք մենք, և մեր գալակտիկան կոչվում է Ծիր Կաթին կամ Հարդագողի ճանապարհ: Այս գալակտիկայի մեջ մտնում է՝</p> <p>Արեգակնային Համակարգը. բյուրավոր աստղեր և նրա շուրջը պտտվող մոլորակներ:</p> <p>Ըստ հայկական առասպելի, մի խիստ ձմեռ հայերի նախնի Վահագնը՝ ռազմի աստված(հին հայկական դիցարանում պատերազմի, քաջության ու հաղթանակի, ամպրոպի ու կայծակի աստվածն է ասորիների նախնի Բարշամից հարդ է գողացել և երկնքում թափվել</p>

		<p>Է՝ ՀԱՐԴԱԳՈՂԻ ՃԱՆԱՊԱՐՀ կամ ԾԻՐ ԿԱԹՈՒՆ (ըստ հուն. դիցար. Չևսի որդի Հերակլեսը ծնվել էր մահկանացու կնոջից: Չևսը Հերակլեսին դնում է քնած կնոջ՝ Հերայի մոտ, որ աստվածային կաթ ուտի: Հերան իմանում և հեռացնում է երեխային, կաթի շիթը ցայտում է):</p> <p>ԱՐԵԳԱԿ- Կկարդան երկրորդ պարբերությունը/Ծիր Կաթինում բյուրավոր.../:</p> <p>(Միայն Ծիր Կաթինում 100 միլիարդ աստղ կա: Երկրագնդի յուր. բնակչի 200 աստղ է բաժին հասնում):</p> <p>ա) Ինչե՞ր են աստղերը (Արևներ: Աստղերը երկնային մարմիններ են):</p> <p>բ) Ինչու՞ են կետիկներ թվում մեզ (շատ հեռու են):</p> <p>գ) Ո՞րն է մեզ ամենամոտ աստղը (Արեգակը-10 միլիարդ տարի կյանք ունի: Երկրից հեռու է 150 միլիոն կմ և լույսը երկիր է հասնում ճրոպեում) և ի՞նչ է տալիս երկիր մոլորակին:</p>
<p>Բառայի աշխատանք՝ 5 րոպե</p>	<p>Տեսրում գրում են այսօր, ամբողջ, տիեզերք, անընդհատ, գալակտիկա, տիեզերք, տնօրեն</p>	<p>Հետևում է առաջադրանքի կատարման ընթացքին, հիշեցնում է երեխաներին մոլորակների անվանումների հայկական տարբերակները</p> <p>Մերկուրի- Փայլածու - 1 օրը հավ. է երկրային 58 օրվա</p> <p>Վեներա - Լուսաբեր, Արուսյակ</p> <p>Երկիր պտտվում է արեգակի շուրջը ժամ. սլաքի հակառակ ուղղ.</p> <p>Մարս - Հրատ</p> <p>Յուպիտեր – Լուսնթագ</p> <p>Սատուրն - Երևակ</p> <p>Ուրան - եղանակը տևում է 20 տարի:</p> <p>Նեպտուն - 1 պտույտը կազմում է 165 երկրային տարի:</p> <p>Բացի Վեներայից և ուրանից մնաց. մոլ. պտտվում են և իրենց առ.շուրջը, և արևի:</p> <p>Մոլորակները աստղեր չեն, չունեն սեփական լույս, բայց լուսարձակում են, որովհետև անդրադարձնում են արևի լույսը:</p>

<p>Լեզվատրամաբանական աշխատանք՝ 5 թույլ</p>	<p>Լրացնում են խաչքառը, կարդում են հաղթանակ բառը, զարմանքով նկատում են, որ Վիկտոր նշանակում է հաղթանակ</p>	<p>Հետևում է առաջադրանքների կատարմանը և խրախուսում աշակերտներին</p>
<p>Կշռադատում՝ 5 թույլ</p>	<p>Խմբերը կմիանան կդառնան երկու խումբ: Կտրվի յուրաքանչյուր խմբին մեկական փազել՝ Արեգակի և Երկրագնդի տեսքով: Կհավաքեն նկարները և կպատասխանեն նկարի անկյունում գրված հարցին՝ ինչ գիտեք իմ մասին:</p>	<p>Ուսուցիչը կպատմի հայ մեծ աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանի մասին</p>
<p>Տերմիններ</p>	<p>Գթասիրտ, սփռվել, տիեզերք, գալակտիկա, Ծիր կաթին:</p>	
<p>Գնահատում</p>	<p>Գնահատել դասին ակտիվ մասնակցած աշակերտներին</p>	
<p>Տնային աշխատանք</p>	<p>Մովորել կարդալ, պատմել, հավաքել տեղեկություն Վիկտոր Համբարձումյանի մասին:</p>	
<p>Անդրադարձ՝ 5 թույլ</p>	<p>Ուսուցիչը գրատախտակին խառը գրում է մի քանի նախադասություններ և մեկ &lt;&lt;կողպեք&gt;&gt;, որը դասագրքի առածն է՝ &lt;&lt;Խելքը բնովի է, ոչ թե գնովի&gt;&gt;: Երեխաները ընտրում են &lt;&lt;բանալի&gt;&gt;երեք նախադասությունները և եզրափակում &lt;&lt;կողպեք&gt;&gt; առածով:</p>	